



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Տարբերակված ուսուցման
ռազմավարությունների կիրառման ազդեցությունը
սովորողների առաջադիմության վրա

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Ավետիսյան
Ք. Վաղարշապատ Մ. Գորկու անվ. հմ. 5 ավագ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան

Արմավիր 2022թ



Բովանդակություն

1.Նախաբան	էջ 3-4
2.Հետազոտական համատեքստ	էջ 5-7
3.Գործնական համատեքստ	էջ 7-12
4.Հետազոտության ընթաց	էջ 12-18
5.Տվյալների մշակում և վերլուծություն	էջ 18-22
6.Ամփոփում	էջ 22-23
7.Գրականություն	էջ 23-24



**<<Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի,
թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանա-
պարհով պետք է հասնել այդ գիտելիքին>>:**

Վ.Ա.Սուխոմլինսկի

1.Նախաբան

Յուրաքանչյուր ուսուցիչ իր աշխատանքի ընթացքում փորձում է գտնել հետևյալ հարցերի պատասխանը՝ ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ դասավանդել, ինչպե՞ս կարող եմ օգտակար լինել իմ աշակերտներին, ինչպե՞ս կարող եմ աշակերտների վերաբերմունքը դպրոցի և ուսումնառության նկատմամբ ավելի դրական դարձնել, ինչպե՞ս կարող եմ ապահովել բոլոր աշակերտների առաջադիմության աճը և, արդյո՞ք, դա հնարավոր է: Նախ փորձեմ բացատրել ինչ եմ հասկանում աշակերտների առաջադիմություն ասելով: Առաջադիմությունը լայն հասկացություն է, հետազոտության ընթացքում ես ուսումնասիրել եմ թիրախային խմբի աշակերտների ակադեմիական առաջադիմության հնարավոր աճը տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառման արդյունքում: Ակադեմիական առաջադիմությունը գիտելիքի ծավալի, կարողությունների, հմտությունների յուրացման աստիճանն է, դրանց իմաստավորման, խորության և կայունության տեսակետից: Աշակերտների ակադեմիական առաջադիմությունը արտահայտվում է միավորային, ինչպես նաև ձևավորող գնահատմամբ, որը կարող եմ բնութագրել որպես ուսուցմանը նպաստող գնահատում:

Այս հետազոտական աշխատանքիս գլխավոր նպատակն է պարզել, թե որքանով կարող է տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը նպաստել ակադեմիական առաջադիմության աճին: Ուսումնասիրելով համապատասխան գրականություն, որի մասին մանրամասն կնշեմ հետագա մասերում, ես եկել եմ այն եզրահանգման, որ տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը



կարող է նպաստել աշակերտների ակադեմիական առաջադիմության աճին, քանի որ դասավանդման ընթացքում նկատել էմ, որ հաճախ մենք անտեսում ենք, կամ կարևորություն չենք տալիս աշակերտների միջև եղած տարբերություններին, մենք տալիս ենք նրանց նույն առաջադրանքը, նույն հարցերը, նույն տնային աշխատանքները և պահանջում ենք նույն պատասխանները, տարբերակելով նրանց միայն միավորային գնահատականներով: Բայց նրանք տարբեր են՝ տարբեր են իրենց ուսումնառության ոճերով, նախնական գիտելիքներով, մոտիվացիայով, ուսումնական կարիքներով: Հետազոտությունս իրականացնելու համար ընտրել են 10-րդ հումանիտար հոսքի դասարանը, այս աշակերտները նոր են եկել մեր դպրոց և առաջին կիսամյակի ընթացքում աշխատանք են տարել դասարանում համագործակցային միջավայր , ուսումնառության աշակերտակենտրոն մոդել ստեղծելու և աշակերտներին ավագ դպրոցի առանձնահատկություններին հարմարեցնելու ուղղությամբ: Ղասավանդման ընթացքում հասկացել էմ, որ աշակերտները լավ են աշխատում, պարտաճանաչ են, կարծես թե դասարանի մեծ մասը մոտիվացված է, սիրում են առարկան, բայց 1-ին կիսամյակի արդյունքում առաջադիմության զգալի աճ չեն նկատել: **Խնդիրն** այստեղ հետևյալն է՝ թե ամփոփիչ, թե ձևավորող գնահատման ժամանակ աշակերտները բացասական արդյունքներ չեն գրանցում, բայց բարձր գնահատականներ նույնպես չեն ստանում, դասարանի միջին գնահատականը 6 է: Ավելի լավ ճանաչելով աշակերտներին, հասկանում էմ, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է ավելին և **հարց** է առաջանում՝ ինչու՞ աշակերտներս չեն կարողանում բացահայտել իրենց բոլոր հնարավորությունները, ինչու՞ թեմատիկ գրավոր աշխատանքը կատարելիս հաճախ չեն կարողանում մտաբերել կարևոր փաստերը, ինչու են այդքան ցածր նրանց գնահատականները: Գուցե նրանց պետք է հենց տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը՝ հատկապես տարբերակում ըստ առաջադրանքի և արդյունքի, նաև տարբերակված օժանդակություն և տարբերակում ըստ ժամանակի: Կարծում էմ, որ ավելի արդյունավետ կլինի կիրառել բոլոր ռազմավարությունները, այդ դեպքում նրանց ազդեցությունը ավելի տեսանելի կլինի, հատկապես, որ Լ. Բիլգի և Վ. Բրուկսի <<Տարբերակման կիրառումն ուսումնառության խթանման համար >> հոդվածում նշվում է, որ տարբերակված ուսումնառության ռազմավարությունները առավել հաճախ փոխկապակցված են օգտագործվում: Հետազոտության արդյունքում



ակնկալում են ակադեմիական առաջադիմության աճի միտում տեսնել թիրախային խմբի բոլոր աշակերտների մոտ՝ թեմատիկ գրավոր աշխատանքների, բանավոր հարցումների, գործնական աշխատանքների միավորային գնահատականի աճ, ինչպես նաև ՀԿ միջոցով կտեսնեն բարդ առաջադրանքների կատարման, վերլուծական մտածողության առաջընթաց:

2. Հետազոտական համատեքստ/գրականության ակնարկ

Տարբերակված ուսուցումը սովորողի ուսումնական կարիքներին հարմարեցված մանկավարժական, դիդակտիկ և հոգեբանական մեթոդների և հնարների ամբողջություն է: Այն, որ բոլոր աշակերտները տարբեր են, գիտենք բոլորս: Իսկ ինչով են նույն տարիքի երեխաները տարբերվում իրարից և ինչպես է դա անդրադառնում նրանց ուսումնառության արդյունքների վրա: Տարբեր աղբյուրներում հանդիպելով ուսուցման վրա ազդող աշակերտների տարբերությունների դասակարգման տեսակետների, ես առաձնացրել եմ հետևյալ առանձնահատկությունները. նախնական գիտելիքների տարբերությունը, ճանաչողական կարողությունների տարբերությունը (ընկալումը, կենտրոնացած ուշադրության տևողությունը, հիշողությունը, միտքն ու լեզուն), սովորելու ոճը, մղումը, վերաբերմունքը, հետաքրքրությունները: Նշված տարբերություններն անխուսափելի են դարձնում ուսուցչի կողմից այդ տարբերությունների հաշվի առնելը և ուսուցման ընթացքում նոր մոտեցումներ որդեգրելը: Ինձ համար այդ նոր մոտեցումներից է նաև տարբերակված ուսուցման իրականացումը, քանի որ տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջումների բավարարման և մաքսիմալ զարգացման համար: Այդ տիպի ուսումնառության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, ովքեր ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակումը բնորոշվում է այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են: Տարբերակված ուսուցումը անհատական մոտեցում է ոչ թե առանձին աշակերտների այլ նույնանման ուսումնական կարիքներ և կարողություններ ունեցող



սովորողների: Այս դեպքում ուսուցիչը ոչ թե աշակերտին է հարմարեցնում ուսուցանվող նյութին, այլ նյութը մշակում, դարձնում դյուրամարս յուրաքանչյուր աշակերտի համար: Տարբերակված ուսուցում իրականացնելու համար խմբերի ստեղծման մասին տարբեր կարծիքներ կան` «<101 գաղափար նորարարական մեթոդներ իրականացնող ուսուցիչների համար>> ձեռնարկում նշված է, որ քանի որ խմբերի անդամներն ինքնուրույն են աշխատում, կարիք չկա ստեղծելու փոքր (3-5 անդամներից բաղկացած խմբեր), իսկ «<Способы дифференциации учебной работы школьников>> Т.Моисеева, որ արդյունավետ է աշակերտների խմբավորումը ըստ ուսումնական կարիքների: Ինձ ավելի մոտ է երկրորդ կարծիքը, խմբերի ստեղծումը պետք է իրականացնեն նույնանման ուսումնական կարիքներ ունեցող աշակերտներից, 4 անդամ ունեցող միատարր (հոմոգեն) կառուցվածքով խմբեր: Խմբերը կազմում են հետևյալ սկզբունքով` ցածր տեմպի առաջընթաց և պարտադիր արդյունքների են հասնում դժվարությամբ, միջին տեմպի առաջընթաց, բարձր տեմպի առաջընթաց:

Ինչպես իրականացնել տարբերակված ուսուցումը, ինչ միջոցներ կարող ենք կիրառել: Այս հարցի պատասխանը գտել են և Զ.Փեթթիի «<Դասավանդումն այսօր>> գրքում, հավելված, էջ 616-618, և «<101 գաղափար...>> ձեռնարկում, և Լ.Բիլզի և Վ.Բրուկսի հոդվածում տարբերակում ըստ առաջադրանքի, ըստ ռեսուրսի, ըստ ժամանակի, ըստ օժանդակության, ըստ արդյունքի: Առաջադրանքների տարբերակման տեսակները ներկայացնում են ստորև.

Տարբեր մակարդակի դիդակտիկ և բաշխիչ նյութեր	Տեղեկատու քարտեր և օժանդակ նյութեր
Անհատական և խմբային աշխատանքների առաջադրանքներ	Տնային աշխատանքների տարբերակված առաջադրանքներ

Առաջադրանքների տարբերակման սկզբունքների մասին նշվում է Լ.Բիլզի և Վ.Բրուկսի «<Տարբերակման կիրառումն ուսումնառության խթանման համար>>(գլուխ 6), Տ.Մոիսեևայի «<Способы дифференциации...>> հոդվածում: Տարբերակումը կատարվում է ըստ դժվարության աստիճանի, ըստ ուսումնական



նյութի ծավալի և ըստ ստեղծագործականության մակարդակի: Ուսումնական գործողության կազմակերպման տարբերակումը իրականացվում է ըստ ինքնուրույնության աստիճանի, ըստ օգնության աստիճանի և բնույթի, ըստ ուսումնական գործողությունների բնույթի: Տարբերակված ուսուցման իրականացման ընթացքում մեծ է ուսուցչի դերը սովորողներին ցուցաբերվող օգնության տեսակետից: Այս օգնության ձևերը հետևյալն են՝

- 1.խթանող օգնություն (նորից բացատրում է նյութը սխալը կանխելու նպատակով)
- 2.ուղղորդող օգնություն (հուշում է մտածողությունը ակտիվացնելու նպատակով)
- 3.ուսուցանող օգնություն (ներկայացնում է առաջադրանքի կատարման քայլաշարը)

Օգնության այս ձևերը ներկայացված են Տ.Մոխեսևայի նշված հոդվածում: Ուսումնասիրելով նշված նյութերը առանձնացրել են տարբերակված ուսուցման հետևյալ առավելությունները՝

1.բարձրացնում է ուսուցման մոտիվացիան, սովորողների հետաքրքրությունը առարկայի նկատմամբ,

2.նպաստում է սովորողների գիտելիքների մակարդակի և որակի բարձրացմանը,

3.բարձրանում է սովորողների ինքնուրույնության և ինքնավստահության աստիճանը առաջադրանքները կատարելիս,

4.բարելավում է դասի հուզական ֆոնը,

5.բարձրացնում է բոլոր սովորողների ակտիվությունը դասապրոցեսում,

6.ապահովում է դասապրոցեսում սովորողների ներգրավվածությունը, հնարավորություն է ընձեռում նրանց զարգացման առաջընթացին:

3.Գործնական համատեքստ

Ամփոփելով ուսումնասիրած գրականությունից ստացած գիտելիքներս և հաշվի առնելով գործընկերներիս հարցադրումից ստացած կարծիքները (տես հավելված հմ հմ.1) , խորհրդակցելով իմ մեների հետ, եկա այն եզրահանգման, որ



տարբերակված ռազմավարությունների կիրառումը կարող է ազդել աշակերտների առաջադիմության վրա: Հետազոտությունը իրականացրել են 10-1/2 հունանիտար հոսքի դասարանում, աշակերտների թիվը 22: 1-ին կիսամյակում այս դասարանում աշխատելու համար ընտրել են համագործակցային ուսուցման ռազմավարությունը, քանի որ շատ են կարևորում դասարանում համագործակցային մթնոլորտի ստեղծումը և համագործակցային մեթոդների կիրառումը: Աշակերտները նոր էին եկել այս դպրոց և ունեին իրար ճանաչելու, շփվելու, ուսուցման բոլորովին նոր մակարդակին հարմարվելու և իրենց ճիշտ դրսևորելու, ինքնաբացահայտվելու խնդիրներ: Հենց առաջին դասից բացատրեցի համագործակցային ուսուցման առանձնահատկությունները՝ միասին մտածելու, հարմարվելու ունակությունը, փաստարկներ բերելու/համոզելու ունակությունը, այլոց նկատմամբ հարգանքը, տարակարծության նկատմամբ հանդուրժողականությունը, խմբի մաս լինելու փորձը: Միասին կազմեցինք արդյունավետ համագործակցության կանոնները, այնուհետև ամեն շաբաթ ընտրում էինք մեր ընդունած կանոններից մեկը և աշխատում էինք դրա ուղղությամբ: Աշխատանքը դժվար էր, բայց 1-ին կիսամյակի վերջում կարողացա գրանցել որոշ հաջողություններ: 1-ին կիսամյակում աշակերտները աշխատեցին բազմատարր (հետերոգեն) խմբերով: 2-րդ կիսամյակի հենց սկզբից սկսեցի հետազոտությունս, որի իրականացման համար ստեղծեցի նոր միատարր (հոմոգեն) խմբեր, որոնց առանձնահատկությունն այն է, որ տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրությունները գրեթե նույնն են: Դասարանում ստեղծեցինք 5 4-5-հոգանոց խմբեր, որից ընտրեցի թիրախային խումբ՝ հետազոտությունը իրականացնելու համար: Թիրախային խմբում 4 աշակերտ է, ովքեր միավորվել են տարբերակում ըստ ուսումնական կարիքների սկզբունքով: Այժմ բնութագրեն թիրախային խմբի աշակերտներին, ներկայացնեն նախատեսվող միջամտությունը և հավաքվելիք տվյալները: **Քնարիկ**՝ հանգիստ, շատ կազմակերպված, պարտաճանաչ աշակերտուհի է, 1-ին կիսամյակի միջին միավորը 7 է, դժվարություններ ունի թեմատիկ գրավոր աշխատանք կատարելիս, ստանում է ավելի ցածր միավորներ, կարծում են դա կապված է գիտելիքի կիրառման հմտության հետ, քանի որ բանավոր հարցման ժամանակ պատասխանում է գրեթե բոլոր հարցերին, բազմատարր խմբում ստանձնել է <<մեղմ>> առաջնորդի դերը, օգնում է բոլորին, խմբում բաշխում է աշխատանքը ըստ աշակերտների կարողությունների, ուղղորդում



է, կազմակերպում քննարկումը, այդ գործունեությունը շատ ժամանակ է խլում նրանից, ինքը չի առաջադիմում և նպաստում նրան, որ խմբի մյուս աշակերտները հասնեն բավարար մակարդակին: Նրա առաջընթացը ապահովելու համար ես նրան ընդգրկել եմ թիրախային խմբում, որտեղ ինքը կլինի ուսումնական նույն կարիքներ ունեցող աշակերտների շրջապատում, կկատարի ավելի բարդ առաջադրանքներ, կպատասխանի ավելի բարդ հարցերի, իսկ իր կազմակերպչական հմտությունները կօգտագործի նոր պայմաններում: **Ղավիթ**՝ թիրախային խմբում ընդգրկված աշակերտներից ունի ամենացածր առաջադիմություն, 1-ին կիսամյակի միջին գնահատականը 5 է, բայց ունի ոչ ստանդարտ մտածողություն, անչափ մեծ հետաքրքրություն առարկայի նկատմամբ, արագաշարժ է և արագ մտածող, անմիջապես արտահայտում է առաջին եկած միտքը, ժամանակ չի տրամադրում վերլուծելու, համոզվելու, որ ճիշտ է, նույնիսկ **ԹԳԱ** աշխատում է շուտ կատարել, միշտ առաջինն է հանձնում, իրեն տրամադրած հետադարձ կապում միշտ նշում եմ, որ չշտապի, նորից մտածի, փորձիր մտաբերել , բայց այս տղան համբերություն բոլորովին չունի: Թիրախային խմբում ընդգրկվելով **Ղավիթը** կաշխատի ուժեղ աշակերտների հետ, կսովորի լսել ուրիշների կարծիքները, մտքերը, կկատարի բարդ առաջադրանքներ: Թիրախային խմբում աշակերտները աշխատելու են նաև անհատապես, իսկ հետո քննարկելու են կատարած առաջադրանքը, դա **Ղավիթին** հնարավորություն կտա համեմատել իր կարծիքը խմբի անդամների կարծիքների հետ, շուտ վերջացնելու դեպքում ինքը հնարավորություն կունենա կատարել նաև լրացուցիչ հանձնարարություն, կարծում եմ, որ տեսնելով խմբի այլ անդամների աշխատանքային ոճը կփոխի նաև իրենը, կամ գոնե կհարմարեցնի խմբի աշխատանքի ոճին, կարծում եմ, որ այդ փոփոխությունները կնպաստեն նրա առաջադիմության աճին: **Սոֆյա**՝ անչափ ստեղծագործական, կենսուրախ, ընկերասեր, հաճախում է նկարչության, պարի, ասմունքի խմբակներ, հետաքրքրված է առարկայով, միշտ աշխատում է լրացուցիչ նյութ բերել, որևէ հետաքրքիր փաստ, նրա մտածողությունը ստեղծագործական է, կատարած աշխատանքներում հաճախ ինչվոր պատկերների եմ հանդիպում: Այսքան դրական կողմեր ունեցող աշակերտուհին բավականին ցածր կիսամյակային գնահատական ունի՝ 6 միավոր, որը իմ կարծիքով չի համապատասխանում նրա պոտենցիալին: Ընդգրկվելով թիրախային խմբում Սոֆյան լուրջ մարտահրավերների կհանդիպի՝ անհատա-




պես կատարել բարդ առաջադրանքները, ճիշտ տնօրինել սեփական ժամանակը, համագործակցել ուժերով հավասար աշակերտների հետ և վստահորեն արտահայտել սեփական կարծիքը, հանդուրժելով նաև մյուսների կարծիքները: Թիրախային խմբի աշխատանքին Սոֆյան ստեղծագործականություն կհաղորդի, իսկ ինքը կսովորի ավելի լուրջ վերաբերվել աշխատանքին և կստանա ավելի բարձր առաջադիմություն ունենալու ձգտումը: **Վարդգես**՝ դասարանի ամենալուրջ աշակերտը, հազվադեպ էմ տեսնում նրա ժպիտը, միաժամանակ ինքը չի մեկուսանում, դասարանում նրան հարգում են և հաշվի են առնում նրա կարծիքը: Նույնպիսի լրջությամբ էլ Վարդգեսը վերաբերվում է սովորելուն, բայց 1-ին կիսամյակի նրա գնահատականը 8 է, այս գնահատականը բոլորովին չի համապատասխանում նրա հնարավորություններին: Ինչ է իրեն խանգարել առաջին կիսամյակում ավելի լավ արդյունք գրանցելու համար: Կարծում են, որ հենց Վարդգեսին է բոլորից շատ անհրաժեշտ տարբերակված մոտեցումը, նրա առաջադիմության աճը ապահովելու համար պետք է համադրվի անհատական և խմբային աշխատանքը, բարդ առաջադրանքների կատարումը կնպաստի նրա բարձր մտածողական հմտությունների զարգացմանը, նույն կարողություններ ունեցող աշակերտների հետ աշխատանքի ընթացքում հաղորդակցվելը կառաջացնի ավելի լավ արդյունքներ ստանալու մղումը: Ահա այսպիսինն է իմ թիրախային խումբը, այս խումբը ստեղծելիս են հաշվի են առել հետևյալ սկզբունքները՝ ընդունակությունը և գիտելիքը, անձնական համակրանքը, գենդերային հավասարակշռությունը, որ ներկայացված են «101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար» (Մերենյի, Սաբո, Տակաչ, Բուդապեշտ 2006թ) հոդվածում: Նշված թիրախային խմբում ընդգրկված աշակերտների առաջադիմությունն ապահովելու համար, ինչպես նշել են նախաբանում, կիրառելու են տարբերակված ուսուցման բոլոր ռազմավարությունները՝ տարբերակում ըստ առաջադրանքի, ըստ գործընթացի, ըստ ժամանակի և ըստ օժանդակության:

Հետազոտական աշխատանքիս կարևոր մաս է կազմում վկայությունների հավաքագրումը, վերլուծությունը և գնահատումը: Աշխատանքիս այս մասն իրականացնելիս օգտվել են Ա.Փոլարդի և Անդերսոնի «Վերլուծական (Reflective) դասավանդում» հոդվածի «Վկայությունների հավաքագրում և



գնահատում»» բաժնից:Այս հոդվածում ներկայացնում է վերլուծական դասավանդման գործընթացը`

Վկայությունների հավաքագրում և գնահատում (Փոլարդ և Անդերսոն <<Վերլուծական դասավանդում>> էջ 24)



Այս հոդվածի էջ 24-ում հեղինակները նշում են.<<Այստեղ մենք կարող ենք սահմանել չորս հիմնական հմտություն` խնդրին առնչվող առկա հետազոտությունների ուսումնասիրություն, նոր վկայությունների հավաքագրում, վերլուծություն և գնահատում...>>:

Աշխատանքի ընթացքում հավաքագրելու են հետևյալ տվյալներ`

1.բանավոր հարցման , գործնական աշխատանքների, թեմատիկ գրավոր աշխատանքների հայտորոշիչ թեստերի միավորային գնահատականներ, ինչպես նաև հետադարձ կապի նմուշներ, որ ցույց են տալիս տարբերակման ռազմավարությունների կիրառման ազդեցությունը թիրախային խմբի աշակերտների առաջադիմության վրա: Այդ արդյունքները համեմատելու են առաջին կիսամյակի գնահատականների հետ, որ աշակերտները ստացել էին մինչ միջամտությունը: Այստեղ ինձ համար շատ կարևոր էր որոշել, թե որքանով են համեմատելի այս տվյալները: Ինչ վերաբերում է աշակերտների նոր դպրոց գալու հետ կապված ադապտացիոն



շրջանի, այն հաղթահարել ենք առաջին մեկ ամսվա ընթացքում: Առարկայի բովանդակային կառուցվածքը պարզից դեպի բարդ է և 2-րդ կիսամյակի նյութերը ավելի բարդ են: Միավորային գնահատականները համեմատելի դարձնելու համար ես աշխատել եմ նույն պայմանները ստեղծել՝ նույնատիպ թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքներ, բանավոր հարցման գնահատման նույն ռուբրիկը, նույնն է գնահատականների քանակը: Աշակերտների ակադեմիական առաջադիմության աճի վրա, ամշուշտ, կարող են ազդել բազմաթիվ գործոններ, բայց նպատակային, հետևողական միջամտությունը պետք է իր դերը կատարի:

2. Ղասի դիտարկման թերթիկ՝ դիտարկելու են գործընկերներս, թերթիկի միջոցով պարզելու եմ, թե ինչպես եմ իրականացնում տարբերակված ռազմավարությունները դասի ընթացքում, դիտարկումներից կպարզեմ դասի որ փուլը, կամ տարբերակման որ ռազմավարության կիրառումը շտկման կարիք ունի, հաջորդ դասը իրականացնելիս կօգտագործեմ այդ տվյալները:

3. Տարբերակված ռազմավարությունների կիրառման բոլոր դասերին ներկա էր նույն դիտարկողը, ով հետևել է թիրախային խմբի 4 աշակերտների աշխատանքին և նշումներ է կատարելու դիտարկողի թերթիկում, այդ թերթիկները օգտագործելու եմ աշակերտների աշխատանքը վերլուծելու համար, ինչպես նաև շտկումներ կատարելու և հետագա գործընթացը կազմակերպելու համար:

4. Աշակերտների ինքնագնահատման ռուբրիկ, որի միջոցով աշակերտները կգնահատեն իրենց աշխատանքը թիրախային խմբում ամբողջ միջամտության ընթացքում, վերլուծելով այդ վկայությունը, կտեսնեմ ինչպես է նրանց աշխատանքը խմբում ազդել առաջադիմության վրա:

Լոուրենս Ստեյնհաուզը իր «Կրթակարգի հետազոտություն և զարգացում» գրքի Գլուխ 10-ի «Ուսուցիչը՝ որպես հետազոտող» էջ 1-ում նշում է, որ «հատկորոշման տեսքով ներկայացված գաղափարներն ուսուցիչների կողմից փորձարկվում են... յուրաքանչյուր դասարան լաբորատորիա է, իսկ յուրաքանչյուր ուսուցիչ՝ գիտական համայնքի անդամ»: Այս միտքը մասամբ ճիշտ է, իր աշխատանքի ընթացքում ուսուցիչը բազմաթիվ գաղափարներ է փորձարկում, ամեն դասին պլանավորում և իրականացնում է մի գործընթաց, որտեղ փորձարկվում են ուսուցչի



կողմից ընտրված մեթոդները, հնարները, դասի նպատակներին և վերջնարդյունքներին հասնելու եղանակները: Սակայն փորձարկումը առանց հետագա վերլուծությունների և եզրահանգումների անիմաստ է: Այս հետազոտությունով ես ախտորոշեցի խնդիրը, որոշեցի դրա լուծման եղանակը, ներմուծեցի այն աշխատանքիս մեջ, ստացա տվյալներ և որոշ արդյունքներ, որոնք պիտի վերլուծեմ և եզրահանգում անեմ: Ինչ վերաբերում է <<լաբորոտորիա>> ասածին, դասարանը կարելի է համարել լաբորոտորիա փորձարկումն իրականացնելու տեսակետից, բայց <<մաքուր>> արդյունք ստանալու տեսակետից՝ դժվար է ակնկալել <<ստերիլ>> պայմաններ, բացառել տարբեր տեսակի գործոնների (օբյեկտիվ և սուբյեկտիվ) ազդեցությունը աշակերտների արդյունքների վրա: Այնուամենայնիվ, հետազոտությունն իրականացված է, կարծում եմ, որ իմ կողմից ընտրված միջամտությունը ազդել է աշակերտների առաջադիմության վրա, ինչը կփորձեմ պարզել գործընթացի և արդյունքների վերլուծության միջոցով:

4. Հետազոտության ընթացք

Տարբերակված ռազմավարությունների կիրառումը հետազոտության ընթացքում իրականացրել եմ 3 հիմնական փուլերով՝

1. Ճանաչել յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, կրթական կարիքները,

2. խմբավորել սովորողներին ըստ կրթական կարիքների և անհատական առանձնահատկությունների,

3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը;

1-ին փուլը իրականացրել եմ 1-ին կիսամյակի ընթացքում, աշակերտները հենց սկզբից սկսեցին աշխատել համագործակցային բազմատարր խմբերով, իմչպես նաև անհատապես: Աշխատանքի ընթացքում ուսումնասիրեցի նրանց կրթական կարիքները, հնարավորությունները, նկատեցի, որ բազմատարր խմբերում աշխատելիս, որոշ աշակերտներ առաջընթաց գրեթե չեն արձանագրում, իրենց ժամանակը ավելի շատ ծախսում են խմբի անդամներին օգնելու, բայց կարող էին օգտագործել լրացուցիչ բարդ առաջադրանքներ կատարելու, լրացուցիչ նյութերով



աշխատելու, ավելի խորը գիտելիք ստանալու համար: Ավելի ցածր ուսումնական կարիքներ ունեցող աշակերտները հույսները դրել են իրենց ընկերների վրա, պասիվ էին, շատ քիչ էին կարողանում անել, քանի որ նրանց ավելի շատ ժամանակ էր պետք նույն առաջադրանքը կատարելու համար: Հաշվի առնելով ուսումնասիրությունս, որոշեցի դասարանում կիրառել տարբերակման ռազմավարությունները, քանի որ կարծում եմ, որ դրանց կիրառումը պետք է որ նպաստի աշակերտների առաջադիմությանը: Դասարանում ստեղծեցի տարբերակում ըստ կրթական կարիքների սկզբունքով խմբեր, հետազոտության համար ընտրեցի 4 աշակերտից բաղկացած թիրախային խումբը և սկսեցի միջամտությունը: Աշակերտների առաջադիմությունը չափելու եմ միավորներով և 1-ին կիսամյակի արդյունքները, որոնք հանդես են գալու որպես ելակետային տվյալ, հետևյալն են.

ԹԳԱ՝ թեմատիկ գրավոր աշխատանք

Բհ՝ բանավոր հարցում

ԳԱ՝ գործնական աշխատանք

Միջ՝ միջին գնահատական

Աղյուսակ հմ. 1՝ Աշակերտների առաջադիմությունը 1-ին կիսամյակում

հմ	Անուն	ԹԳԱ		Բհ		ԳԱ		Միջ.
		Քան.	միջ.	Քան.	միջ.	Քան.	Միջ.	
1.	Քնարիկ	2	7	3	8	2	7	7
2.	Դավիթ	2	5	3	6	2	5	5
3.	Սոֆյա	2	4	3	7	2	7	6
4.	Վարդգես	2	7	3	8	2	8	8



Միջամտությունից հետո ստացված արդյունքները համեմատվելու են այս արդյունակի վերջին տվյալի հետ:

Հետազոտության առաջին դաս. թեմա՝ Մշակույթի վերելքը հելլենիզմի շրջանում, դասի տեսակը՝ խմբային հետազոտություն: Աշակերտներն այստեղ աշխատեցին առաջին կիսամյակում ստեղծված բազմատարր խմբերով և մոտ մեկ ամիս միասին աշխատեցինք հետազոտության վրա: Այստեղ կիրառել են տարբերակված ուսուցման հետևյալ ռազմավարությունները՝ տարբերակում ըստ ռեսուրսի (խմբերը օգտագործել են տարբեր աղբյուրներ), տարբերակում ըստ ժամանակի (տարբեր խմբերին տարբեր քանակությամբ ժամանակ էր պետք առաջադրանքի կատարման համար), ըստ օժանդակության (օժանդակություն են ցուցաբերել արվեստի պատմության ուսուցիչը, ինֆորմատիկայի ուսուցիչը և, իհարկե, ես՝ հետազոտության բոլոր փուլերում): Դասի ամբողջական վերլուծությունը ներկայացված է դասի պլանում (դասապլան հմ. 1)՝ անդրադարձ բաժնում, իսկ այստեղ ես կներկայացնեմ իմ դիտարկումները թիրախային խմբի աշակերտների աշխատանքի վերաբերյալ: Թիրախային խմբի աշակերտները բոլորը աշխատում էին տարբեր խմբերում և ինչպես երևում է իրենց կատարած աշխատանքի անդրադարձից և ինքնագնահատման թերթիկից գրեթե ամբողջ աշխատանքը իրենք էին կատարել, իրենց թեմաների առավել կարևոր հարցերին նույնպես պատասխանում էին այդ աշակերտները: Ինչպես երևում է դիտարկողի թերթիկից (հավ. Հմ. 2, թերթիկ հմ. 1) Սոֆյան և Քնարիկը ակտիվորեն մասնակցել են քննարկումներին (3-ական դրական արձագանք 6 հնարավորից), Վարդգեսը ունի 4 դրական արձագանք, գրեթե բոլոր կետերով, կարծում են, որ կարող էր ավելի ակտիվ մասնակցել եթե իր խառնվածքի առանձնահատկությունների հետևանքով պասիվություն չցուցաբերեր (դրական արձագանք չի ստացել միայն քննարկման մեջ ուրիշի ներգրավումը և ոչ տեղին դիտողությունների բացահայտումը): Իսկ ահա Ղավիթը ստացել է ընդամենը 2 դրական արձագանք և 2 բացասական՝ անուշադրություն կամ ուրիշի ուշադրությունը շեղելը և խոսողին ընդհատելը: Այս դասը ցույց տվեց, որ տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը կոնկրետ այս դասին այդքան էլ արդյունավետ չի եղել, քանի որ կրթական բարձր կարիքներ ունեցող աշակերտները շատ ակտիվ են



եղել, քննարկումների մենաշնորհը վերցնելով իրենց ձեռքը, եթե դասիս նպատակը լիներ միայն թիրախային խմբի աշակերտների առաջադիմությունը, ես կասեի, որ հասել եմ նպատակին, քանի որ այդ աշակերտները բարձր միավորներ են ստացել(երեքը 8 միավոր, մեկը՝ 7 միավոր): Սակայն ես ուզում էի տեսնել տարբերակված ռազմավարությունների կիրառման ազդեցությունը բոլոր աշակերտների առաջադի-մության վրա: Այս դեպքում դա չերևաց: Հաջորդ դասերին կաշխատեմ տարբերակված ռազմավարությունների կիրառումը ավելի ազդեցիկ դարձնել:

Դաս 2-րդ. դասի թեմա՝ Քրիստոնեության հռչակումը պետական կրոն: Այս դասին աշակերտները առաջին անգամ աշխատեցին նոր խմբերով և թիրախային խմբի աշակերտները մեկտեղվեցին: Սկզբում ինձ թվաց, թե նրանք դժգոհ են այդ խմբավորումից: Օրինակ Սոֆյան միանգամից նստեց հեռու և իր ամբողջ տեսքով ցույց տվեց իր դժգոհությունը, դասի ընթացքում ուշադրությամբ հետևում էի նրա աշխատանքին և տեսա, որ հարմարվում է և նորից ակտիվություն է ցուցաբերում, Քնարիկը և Վարդգեսը միանգամից սկսեցին աշխատել, բայց առանց խանդավառության, իսկ Դավիթը անմիջապես հայտարարեց, որ իրենց խումբը լավագույնն է: Աշակերտների խմբավորումը շատ կարևոր է, քանի որ դրանից է շատ դեպքերում կախված խմբի աշխատանքի արդյունավետությունը: Այդ խնդրին ես անդրադարձել եմ աշխատանքիս նախորդ մասում: Չնայած դասի սկզբում աշակերտները դժգոհ էին, բայց հենց առաջին դասից աշխատանքը ստացվեց՝ թիրախային խմբի աշակերտները ստացան տարբերակված առաջադրանք. կատարել <<մտքերի քարտեզագրում >> վարժությունը քրիստոնեության ընդունման նախադրյալների մասին, 2-րդ առաջադրանքը կատարելու համար կատարվեց տարբերակում ըստ դերերի՝ առաջնորդ, հարցատու, գրառող, ստուգող: Աշակերտները իրենք էին ընտրել իրենց դերերը և դա նույնպես հետաքրքիր էր՝ Դավիթը անմիջապես ընտրեց հարցատուի դերը և շատ հետաքրքիր հարց պատրաստեց, օրինակ՝ Ինչ կլիներ եթե Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ 3-րդը երբեք իրար չհանդիպեին: Առաջնորդի դերը ստանձնեց Քնարիկը, ընդ որում քննարկման արդյունքում, գրառողը Սոֆյան էր, իսկ ստուգողը՝ Վարդգեսը: Տարբերակված 3-րդ առաջադրանքը քրիստոնեության ընդունման պատմական նշանակության



վերաբերյալ <<մեկ կողպեք, երեք բանալի >> վարժությունն էր: Այս դասին տարբերակված ռազմավարությունների կիրառումը բավականին արդյունավետ էր, քանի որ թիրախային խմբի աշակերտները ստացան ավելի բարդ հանձնարարություններ, աշխատեցին անհատապես, ավարտեցին ժամանակին, մասնակցեցին քննարկումներին: Հայտորոշիչ հարցադրումը իրականացրեցի հաջորդ դասի սկզբին, թիրախային խմբի աշակերտների արդյունքները հետևյալն են՝ Քնարիկ 6 հարցից՝ 5-ը ճիշտ, Դավիթ՝ 4 ճիշտ, Սոֆյա՝ 5 ճիշտ և Վարդգեսը՝ բոլորը ճիշտ: Ինչ տվեց տարբերակված ռազմավարությունների կիրառումը թիրախային խմբի աշակերտներին՝ ավելի արդյունավետ և արագ աշխատել, ժամանակ տրամադրել մտածելու, վերլուծելու, համադրելու և մտածողական այլ աշխատանքներ կատարելու, ներխմբային քննարկումը նույնպես արդյունավետ է, քանի որ նրանց ուժերը գրեթե հավասար են, կարիք չկա անդրադառնալ պարզ հարցերին կամ պարզ առաջադրանքներին:

Դաս 3-րդ. թեմա՝ Ավատատիրության հաստատումը Հայաստանում: Այս դասին կիրառել են տարբերակում ըստ ժամանակի և ըստ օժանդակության ռազմավարությունները, քանի որ դասանյութը զուտ տեսական է, աշակերտները դժվարությամբ են դա յուրացնում: Ակնկալելով, որ թիրախային խմբի աշակերտները ժամանակից շուտ կավարտեն առաջադրանքը, գրատախտակին գրեցի լրացուցիչ առաջադրանք շուտ ավարտողների համար՝ համեմատել Արևմտյան Եվրոպայում և Հայաստանում ավատատիրության հաստատման նմանությունները և տարբերությունները: Առաջադրանքը կատարեցին Վարդգեսը և Քնարիկը, նրանք քննարկման ժամանակ ներկայացրեցին նաև այդ հարցի պատասխանը, նշելով ավատատիրության հաստատման ուղիների տարբերությունը, հողատիրության ձևերի նմանությունը: Սոֆյան նույնպես շուտ ավարտեց և օգնություն ցույց տալու համար ժամանակավորապես տեղափոխվեց 5-րդ խումբ, ովքեր դժվարանում էին առաջին առաջադրանքը կատարելիս: Դասի վերջում աշակերտները գրեցին հայտորոշիչ թեստ(դաս հմ. 3, հայտ.թեստ), որի արդյունքները ինձ ուրախացրեցին՝ Վարդգեսը վերջապես առաջին անգամ գրեց անսխալ, զարմանալի էր, որ Դավիթը, իր սովորության համաձայն, առաջինը հանձնեց թեստը և լրիվ ճիշտ, Սոֆյայի մոտ կա առաջադիմություն՝ ճիշտ պատասխանների քանակը ավելի շատ է, քան սխալ:



Միայն Քնարիկն էր անսպասելի վատ արդյունք ցուցաբերել, որի համար ուներ պատճառներ և դասից հետո ինձ պատմեց և խոստացավ անպայման սովորել նյութը և ներկայացնել լրացուցիչ պարապմունքների ժամանակ: Դասարանից դուրս գալուց առաջ աշակերտները կատարեցին <<ելքի տոմս՝ լուսացույց >> վարժությունը(դաս հմ. 3, ինքնագնահատման թերթիկ) և Քնարիկը նշել էր դեղին պատասխանը, որն արտացոլվեց հայտորոշիչ թեստում: Այս դասից հետո կատարել են միջանկյալ գնահատում, արդյունքները հետևյալն են՝ թիրախային խմբի աշակերտների մոտ զգացվում է առաջադիմության աճի միտում, դրա մասին վկայում են դասի առաջադրանքների ճիշտ և արագ կատարումը, բանավոր հարցումների գնահատականների աճը և հայտորոշիչ թեստի արդյունքները:

Դաս 4-րդ. թեմա՝ Պայքար կենտրոնացված իշխանության ուժեղացման համար: Իրականացրել են տարբերակում ըստ ժամանակի և ըստ օժանդակության ռազմավարությունները: Թիրախային խմբի աշակերտները այս դասի ընթացքում բավականին ակտիվ էին, նրանք կարողանում են անհատապես արագ աշխատել, հետո սկսում են ներխմբային քննարկում անել և քանի որ առաջադրանքների կատարման և քննարկման ժամանակ կիրառվում են բաց հարցեր, նրանք հետաքրքիր վերլուծական-քննադատական մտքեր են արտահայտում, կարծիքների բախում է տեղի ունենում, օրինակ այն հարցին թե հնարավոր էր, արդյոք, պահպանել միասնական պետությունը Արշակունյաց արքաների օրոք, աշակերտների մեծ մասը տրվում էր զգացմունքներին և ասում <<այո, եթե թագավորները ավելի հանդուրժող լինեին, հարգեին նախարարների և կաթողիկոսի իրավունքները և այլն>>, իսկ Վարդգեսը ասում է <<ոչ>> և բացատրում ինչու: Դասի դիտարկողի թերթիկից(հավ. Հմ.2, թերթիկ հմ.4) երևում է, որ թիրախային խմբի աշակերտները ավելի ակտիվ են մասնակցում քննարկումներին և խմբի 3 անդամ ունեն դրական 5 արձագանք, միայն Դավիթն է, որ ունի դրական 4 արձագանք և բացասական 1 արձագանք (ոչ տեղին դիտողություն): Դասի արդյունքն է նաև միավորային գնահատումը՝ Քնարիկ՝ 8 միավոր, Դավիթը՝ 7 միավոր, Սոֆյան՝ 7 միավոր, Վարդգեսը՝ 9 միավոր:

Դաս 5-րդ. թեմա՝ Արշակ 2-րդ և Պապ թագավորներ: Այս դասին կիրառել են տարբերակում ըստ առաջադրանքի, թիրախային խմբի աշակերտները ստացան



բավականին բարդ առաջադրանք, նրանք պետք է վերլուծեին Արշակ 2-րդի և Պապ թագավորի գործունեությունը հետևյալ շղթայով՝ խնդիր - լուծում – արդյունք, որը պահանջում էր և նյութի գերազանց իմացություն, և մտածողական-վերլուծական բարձր հմտություն: Տարբերակված բոլոր դասերի ընթացքում կիրառել են առաջադրանքների տարբերակում պարզից դեպի բարդ սկզբունքով, այս դասի առաջադրանքը թերևս ամենաբարդն էր: Պետք է նշեն, որ թիրախային խմբի աշակերտները կատարեցին առաջադրանքը իմ ուղղորդմամբ, իսկ քննարկումների ժամանակ ներկայացնում էին փաստերը, տալիս գնահատականներ, վերլուծում արդյունքները: Դիտարկողի թերթիկից (հավ. հմ. 2, թերթիկ հմ. 5) երևում է, որ թիրախային խմբի աշակերտները լավ են մասնակցել դասին՝ Վարդգեսը 6 դրական արձագանք, Քնարիկն ու Սոֆյան 5-ական դրական արձագանք, Դավիթը՝ 4 դրական և մեկ բացասական արձագանք (խոսողին ընդհատելը): Ինչ են տալիս ինձ այդ դիտարկումները և ինչի մասին կարող են վկայել արձագանքները: Փորձեմ մեկ աշակերտի օրինակով բացատրել: Երբ որ ես տեսնում են, որ տարբերակման ռազմավարությունների կիրառման 5-րդ դասին Վարդգեսը վերջապես դրական արձագանք է ստանում բոլոր 6 կետերից, դա նշանակում է, որ նա դասի ընթացքում ակտիվ է, չի վախենում արտահայտել սեփական կարծիքը և պաշտպանել այն, վստահ է իր գիտելիքի մեջ, ուշադիր է և այս գծերից մի մասը ձեռք է բերել կամ զարգացրել է տարբերակված ռազմավարությունների ազդեցության ներքո:

Դաս 6-րդ՝ թեմա՝ Արշակունյաց թագավորության մայրամուտը: Այս դասին կիրառել են տարբերակում ըստ առաջադրանքի (1-ին առաջադրանք) և տարբերակում ըստ արդյունքի (2-րդ առաջադրանք) ռազմավարությունները: Թիրախային խմբի աշակերտները կատարեցին առաջին առաջադրանքը առանց իմ միջամտության, մասնակցեցին քննարկումներին, հիմնականում մեկնաբանում, բացատրում, գնահատում էին, ինչի մասին նշել են դասի անդրադարձում: Դիտարկողի թերթիկից (հավ. հմ. 2, թերթիկ հմ. 5) երևում է, որ Սոֆյան և Վարդգեսը ստացել են 6 դրական արձագանք, Քնարիկը 5, Դավիթը 4: Յուրաքանչյուրը ստուգող հարցադրումներին աշակերտները պատասխանել են հետևյալ կերպ՝ 6 հարցից Վարդգեսը ճիշտ է պատասխանել 6-ին, Քնարիկը 5-ին, Սոֆյան՝ 5-ին, Դավիթը՝ 4-ին: Այս դասով ավարտվեց թեմա 2-ի ուսումնասիրությունը և հաջորդ դասին՝



աշակերտները գրեցին ԹԳԱ, որի արդյունքները շատ կարևոր են, քանի որ ամփոփում են հետազոտական աշխատանքս: Թեստի վերլուծություն. թեմատիկ գրավոր աշխատանքի առաջադրանքները տարբերակված էին, 1-ին և 2-րդ խմբերին տրված էին ավելի բարդ առաջադրանքներ, թիրախային խմբի աշակերտները գրանցեցին լավ արդյունքներ՝ Սոֆյան 8 միավոր, Քնարիկը 9 միավոր, Վարդգեսը 9 միավոր: Բացառություն էր միայն Ղավիթը, ով ստացավ 6 միավոր, աշխատանքը կատարեց դժվարությամբ, բայց առաջադիմության դինամիկան միևնույն է երևում է, քանի որ մինչ միջամտությունը թեմատիկ գրավոր աշխատանքներից նա ստանում էր միջինում 5 միավոր: Իմ ակնկալիքները այդ աշակերտից ավելի մեծ էին, չեմ կարծում, որ ես սխալվել եմ և ճիշտ չեմ գնահատել նրա հնարավորությունները, երևի միջամտությունը պետք էր ավելի թիրախային լիներ: Մանրամասն վերլուծությունը կներկայացնեմ հաջորդիվ: Սոֆյաի ստացած 8 միավորը բավականին բարձր է, նա անթերի է կատարել ամենաբարդ առաջադրանքները՝ իրադարձությունների հաջորդականություն, աշխատել է ճիշտ՝ նշելով յուրաքանչյուր իրադարձության տարեթիվը, հետաքրքիր է կատարել 6-րդ առաջադրանքը՝ նշելով ոչ թե տարեթիվերը, այլ այն թագավորներին, ում ժամանակ տեղի է ունեցել իրադարձությունը: Փոքրիկ սխալ է թույլ տվել համապատասխանեցման առաջադրանքում, որը կարծում եմ անուշադրության հետևանք է, իսկ 10-րդ առաջադրանքում 2 սխալ է թույլ տվել: Այս աշակերտուհու դեպքում ԹԳԱ կատարելու առաջխաղացումը ակնհայտ է, բայց աշխատանքը պետք է շարունակվի: Վարդգեսը և Քնարիկը գրեթե անթերի են կատարել աշխատանքը և բարձր միավորներ են ստացել:

5.Տվյալների մշակում և վերլուծություն

Այժմ ներկայացնեմ միջամտության ընթացքում թիրախային խմբի աշակերտների ստացած բոլոր միավորային գնահատականները ըստ բաղադրիչների.

ԹԳԱ՝ թեմատիկ գրավոր աշխատանք

Բհ՝ բանավոր հարցում

ԳԱ՝ գործնական աշխատանք



Միջ` միջին գնահատական


Աղյուսակ հմ. 2` Աշակերտների առաջադիմությունը միջամտության արդյունքում

հմ	Անուն	ԹԳԱ		Բհ		ԳԱ		Միջ.
		Քան	միջ	Քան	միջ.	Քան.	միջ.	
1	Քնարիկ	2	9	3	8	2	8	8
2	Դավիթ	2	6	3	7	2	6	6
3	Սոֆյա	2	8	3	7	2	7	7
4	Վարդգես	2	9	3	9	2	9	9

Աղյուսակից երևում են միջամտության ընթացքում թիրախայի խմբի աշակերտների ստացած բոլոր գնահատականները և նրանց միջին գնահատականը, այստեղից երևում է, որ Քնարիկը ավելի լավ է կատարում ԹԳԱ, երբ ինքը աշխատում է ինքնուրույն և մտածելու ու գրելու ժամանակը ինքն է բաշխում: Դավիթը հակառակ` ավելի լավ է իրեն դրսևորում բանավոր հարցումներում, որտեղ արագ հետադարձ կապ է ստանում և շտկում մտքերը: Սոֆյան գրեթե հավասար միավորներ է ստանում բոլոր բաղադրիչներով, իսկ Վարդգեսը բոլոր բաղադրիչներից ստացել է 9 միավոր:

Աղյուսակ 1-ի և 2-ի միջին գնահատականները համեմատելու և վերլուծելու համար ներկայացնեն դրանք դիագրամի տեսքով`

Դիագրամ հմ. 1 Թիրախային խմբի աշակերտների 1-ին կիսամյակի և ընթացիկ գնահատականների համեմատություն



Թիրախային խմբի աշակերտների առաջադիմության դինամիկա




Դիագրամից երևում է, որ թիրախային խմբի բոլոր աշակերտները միջամտության արդյունքում գրանցել են առաջադիմության աճ՝ Քնարիկը 7-ից 8, Դավիթը 5-ից 6, Սոֆյան 6-ց 7 և Վարդգեսը 8-ից 9: Իսկ ի՞նչ է կանգնած այս թվերի ետևում: Հետազոտության իրականացման ընթացքում իրականացված դասերին իրենց մասնակցության մասին աշակերտները կատարել են ինքնագնահատում (տես հավել. հմ.3 և 5), որտեղից երևում է թե ինչպես են աշակերտները տեսնում իրենց մասնակցությունը դասերին: Պետք է նշեն, որ աշակերտները բավականին անկեղծ էին : Թիրախային խմբի բոլոր աշակերտները <<մասնակցել են քննարկումներին>> հարցին նշել են <<գրեթե միշտ>>,<< զգալի աշխատանք են կատարել>> գրել են <<հաճախ>>, բայց մյուս հարցերում կան տարբերություններ: Ինքնագնահատման



թերթիկներից ես տեղեկություն ստացա այն մասին, թե ինչպես են աշխատել աշակերտները միջամտության ընթացքում և ինչպես է դա ազդել իրենց առաջադիմության վրա:

Այս դիագրամը ներկայացնում է թե ինչպես են աշակերտները գնահատում իրենց մասնակցությունը դասերին.

Դիագրամ հմ. 2 Թիրախային խմբի աշակերտների մասնակցությունը դասերին ըստ ինքնագնահատման ռուբրիկի



Ինքնագնահատման ռուբրիկի հարցերը`

- 1.Մասնակցել եմ քննարկումներին
- 2.Զգալի աշխատանք եմ կատարել
- 3.Մյուսներին աշխատելու հնարավորություն եմ ընձեռել
- 4.Օգնել եմ պլանավորել առաջադրանքի կատարումը
- 5.Օգնել եմ պարզել և լուծել խնդիրները



6. Ամփոփել և հստակեցրել են հարցերը
7. Փոխզիջումների են գնացել և ջանացել լինել հանդուրժող
8. Դասերին ներկայացել են ժամանակին
9. Ներկայացել են անհրաժեշտ նյութերով
10. Կատարել են խոստումներս
11. Արտահայտել են բոլոր անհանգստություններս

Վերլուծելով այս տվյալները հասկացա, որ բոլորը մասնակցել են քննարկումներին և դա ապացուցվում է նաև բանավոր հարցման միավորային գնահատականներով և դիտարկողի թերթիկներով, մտածելու տեղիք է տալիս 11-րդ հարցը, որը ցույց է տալիս, որ աշակերտները գրեթե չեն կիսվում իրենց անհանգստություններով ինձ հետ (այդ ուղղությամբ պետք է աշխատել): Վերադառնամ հմ. 1 դիագրամին և վերլուծեմ տվյալները: Տարբերակված ռազմավարությունների կիրառման արդյունքում Քնարիկը զգալի աճ է գրանցել ԹԳԱ կատարելիս, եթե 1-ին կիսամյակում նա միջինում ստանում էր 6 միավոր, ապա միջամտության ընթացքում ստացել է 9 միավոր: Կարծում եմ դա տարբերակված առաջադրանքների կատարման արդյունք է, միջամտության ընթացքում ինքը միշտ կատարել է ավելի բարդ առաջադրանքներ, օգտվել է խմբի անդամների օժանդակությունից և ձեռք է բերել կարևոր հմտություններ: Քնարիկի առաջադիմությունը մյուս բաղադրիչից այդքան մեծ չէ՝ գործնական աշխատանք կատարելիս նրան պակասում է (իմ կարծիքով) ստեղծագործականությունը, քանի որ ինքը կարծես թե ամեն ինչ ճիշտ է կատարում, բայց միշտ ինչոր բան պակասում է, սովոր է գործել իր կողմից ստեղծած կարծրատիպի մեջ: Սակայն այդ բաղադրիչում առաջադիմությունը նույնպես առկա է՝ 1-ին կիսամյակում 7 միավոր, միջամտության ընթացքում՝ 8 միավոր: Դավիթի առաջադիմությունը նույնպես տեսանելի է (սպասվածից ավելի փոքր), միավորային գնահատման բոլոր բաղադրիչներով գրանցել է աճ 1 միավորով: Դավիթը թիրախային խմբի ամենացածր առաջադիմություն ունեցող աշակերտն էր և նույնիսկ այս փոքր առաջադիմությունը և նրա , և ինձ համար կարևոր է, տարբերակման ռազմավարությունների կիրառման արդյունքում նա կարողանում է թեկուզ մասամբ կատարել բարդ առաջադրանքները, բանավոր պատասխաններում դրսևորում է վերլուծական մտածողության տարրեր, իսկ գործնական աշխատանք կատարելիս չի հասցնում կատարել մինչև վերջ, բայց կատարած աշխատանքը վկայում է որ նա կարող է ավելի լավ արդյունք գրանցել: Սոֆյան միջամտության արդյունքում լավ ցուցանիշներ է գրանցել ԹԳԱ, 1-ին կիսամյակում 4 միավոր, միջամտության ընթացքում 8 միավոր: Այս արդյունքը անկասկած տարբերակված ուսումնառության ռազմավարությունների կիրառման արդյունք է. աշխատելով թիրախային խմբում նա ավելի մեծ պատասխանատվություն զգաց, գուցե նրան պետք էր, որ ես հավատայի նրա ուժերին, հնարավորություններին: Միջամտության ընթացքում նա միշտ ակտիվ



էր, նրան դուր եր գալիս հենց գործընթացը, աշխատելը, բարձր միավորներ ստանալու ձգտումը, նա հավատաց իր ուժերին: Վարդգեսի մասին ես նշել էի, որ գուցե նա հենց այն աշակերտն է, ու ամենից շատ է անհրաժեշտ տարբերակված ռազմավարությունների կիրառումը, այս աշակերտը և միավորային, և որակական աճ է գրանցել, բոլոր բաղադրիչներից 9 միավոր, խմբում ինքը սկսեց ավելի արդյունավետ աշխատել (դասերի ընթացքում աշակերտները աշխատում էին ինչպես անհատապես, այնպես էլ խմբով), տարբերակված մոտեցման շնորհիվ այս աշակերտը կարողացավ ինքնաբացահայտվել, օգտագործել իր բոլոր հնարավորությունները: ԹԳԱ-ից 1-ին կիսամյակում գրանցել է 7 միավոր, միջամտության արդյունքում 9 միավոր: Դասերի ժամանակ ավելի ակտիվ է դարձել, տարբերակված առաջադրանքները կատարելիս զարգացրեց վերլուծական-քննադատական մտածողությունը, թիրախային խմբում ձեռք բերեց մի շարք համագործակցային հմտություններ, որոնք նրան օգնեցին բարելավել առաջադիմությունը:

6. Ամփոփում

Ամփոփելով հետազոտական աշխատանքս եկել եմ հետևյալ եզրահանգումներին՝

1. Տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը դասի ընթացքում կարող է նպաստել աշակերտների առաջադիմության աճին ինչի մասին վկայում են դիագրամ 1-ում ներկայացված արդյունքները: Պետք է նշեմ նաև, որ միջամտությունը կարճատև էր՝ ընդամենը 6 դասաժամ, այդքան կարճ ժամանակամիջոցում հնարավոր չէ պարզել իմ կողմից իրականացված միջամտության բոլոր ազդեցությունները, արդյունքների մաքրությունը և հիմնավորվածության աստիճանը: Բայց հետազոտության արդյունքում ես տեսա ամենակարևորը՝ աշակերտների առաջադիմության աճի միտում և դա հաստատ տարբերակված ռազմավարությունների կիրառման հետևանք է:

2. Հետազոտության ընթացքում պարզեցի նաև, որ աշակերտների առաջադիմությանը նպաստում է նաև տարբերակցված ուսուցման ռազմավարությունների կիրառման ազդեցությունը աշակերտների ներգրավվածության, մոտիվացիայի վրա:

3. Աշխատանքը այդ ուղղությամբ պիտի շարունակեմ, քանի որ հանդված եմ, որ ես՝ որպես ուսուցիչ, ուղղակի պարտավոր եմ հաշվի առնել աշակերտների միջև գոյություն ունեցող տարբերությունները, դրանց ազդեցությունը աշակերտների առաջադիմության և ուսուցման արդյունավետության վրա, իսկ արդյունավետ ուսուցումը Ռ. Քոուլի «<Ինչ ենք հասկանում արդյունավետ ուսուցում ասելիս>> հոդվածում բնորոշվում է որպես «<աշակերտների ձեռքբերումներին նպաստող ուսուցում, որի արդյունքները պայմանավորում են նաև նրանց ապագա հաջողությունները>>: Տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը, անկասկած, թույլ է տալիս ուսուցման ընթացքում հաշվի առնել աշակերտների հոգեբանական,



ուսումնական ոճերի, կրթական կարիքների և այլ տարբերությունները և դրանք օգտագործել ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Հետազոտության ընթացքում ձեռքբերված գիտելիքներն ու հմտությունները պետք է կիրառեն իմ դասավանդման ընթացքում բոլոր դասարաններում, նաև կուզեն կիսվել իմ գծորակների հետ, քանի որ կարծում եմ, որ տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառման մասին իմ գիտելիքները և կիրառման փորձը կարող է օգտակար լինել շատերի համար:

Լրացում

Այս հետազոտությունը իրականացրել եմ 2018-2019 ուստավա ընթացքում, հետազոտություն իրականացնելու առաջին փորձն էր: Աշխատանքը դժվար էր, բայց շատ հետաքրքիր: Աշխատանքի ընթացքում բացահայտեցի իմ աշակերտներին, ձեռքբերեցի շատ հմտություններ, ծանոթացա ժամանակակից մանկավարժական գրականության նոր մտեցումներին: Այդ ամենը չէր կարող չազդել իմ հետագա աշխատանքի վրա: Դասերիս ժամանակ օգտագործում եմ տարբերակված ուսուցման ռազմավարությունները, ավելի շատ՝ տարբերակում ըստ առաջադրանքների և տարբերակում ըստ օժանդակության: Շատ կարևոր է նաև վկայություններ հավաքագրելու և վերլուծելու հմտությունը, քանի որ յուրաքանչյուր դասից մենք բավականին տվյալներ, վկայություններ ենք ստանում, որ կարիք ունեն վերլուծվելու և ճիշտ որոշումներ ընդունելու համար: Ուսուցչի բազմաթիվ առաքելություններից մեկը ուսուցիչը որպես հետազոտող առաքելությունն է և այդ առաքելությունը ուսուցիչն իրականացնում է ամեն օր, ամեն դասին, շատ ժամանակ նույնիսկ այդպիսի խնդիր չդնելով իր առջև, ուրեմն շատ կարևոր է ձեռք բերել հետազոտություն իրականացնելու մասին գիտելիքներ, ձևավորել հմտություններ և կարողություններ, ձևավորել հետազոտություն կատարելու կարողունակություն:



Գրականություն

- 1 Ա.Սերենյի, Վ.Սարո, Տ.Տակաչ <<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>> Բուդապեշտ, 2006թ
- 2 Д. Петти <<Современное обучение>> Москва 2010
- 3 И.Логвина, Л.Рождественская <<Инструменты формирующего оценивания в деятельности учителя-предметника>> Нарва 2012
- 4 С.Бобрышов, М.Смагина <<Методы активизации процесса обучения>> Ставрополь, 2010
- 5 Т.Моисеева <<Способы дифференциации процесса обучения>> Москва, 2012

Հոդվածներ

- 6.Brooks, V and Bills, (2012). Preparing to Teach in Secondary Schools. CH 6 << Using differentiation to support learning>>.
7. Stenhouse L. (1975). An introduction to Curriculum Research and Development. CH 10 .<<The teacher as Researcher>>
- 8.Pollard. A. (2005). Reflectiv Teaching (3rd Ed)
- 9.Coe, (2014). What makes great teaching? Review of the underpinning research. London: Sutton Trust